Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 253 - Ա
որոշման

«ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ» ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Շվանիձոր, Նոնաձոր, Ալվանք գյուղերի հողատարածքների ջրամատակարարումը ապահովելու նպատակով իրականացվելու է ոռոգման ջրի ցանցերի և 6 պոմպակայանների վերականգնման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Բաղրամյան պողոտա 26/1, ՀՎՀՀ՝ 02507456)
4.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Բաղրամյան պողոտա 26/1, ՀՎՀՀ՝ 02507456)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզ, Մեղրի համայնքի Շվանիձոր, Նոնաձոր, Ալվանք գյուղեր, ջրամատակարարում
6.	Ծրագրի բյուջեն	10,665,150 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Մեղրի համայնքի Շվանիձոր, Նոնաձոր, Ալվանք գյուղերի բնակիչներ
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2026 թվականի ապրիլի 30-ից մինչև 2026 թվականի սեպտեմբերի 30-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Շվանիձոր, Նոնաձոր, Ալվանք գյուղերի հողատարածքների ջրամատակարարումը ապահովելու նպատակով նախատեսվում է ոռոգման ջրի ցանցերի և 6 պոմպակայանների վերականգման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում՝ մասնավորապես նախագծի բացատրական, գծագրական, աշխատանքային ծավալների և ամփոփագրերի, ինչպես նաև նախահաշիվների կազմումը: Իրականացվելու է՝

		ապրիլի 30-ից մինչև 2026 թվականի սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում՝ 10,665,150 դրամի չափով:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1) հողատարածքների ոռոգման ջրի ցանցերի նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքներ՝ այդ թվում նախագծի բացատրական, գծագրական, աշխատանքային ծավալների և ամփոփագրերի, ինչպես նաև նախահաշիվների կազմման աշխատանքների իրականացում՝ 5,035,150 դրամի չափով: 2) հողատարածքների ոռոգման ջրի 6 պոմպակայանների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքներ՝ այդ թվում նախագծի բացատրական, գծագրական, աշխատանքային ծավալների և ամփոփագրերի, ինչպես նաև նախահաշիվների կազմման աշխատանքների իրականացում՝ 5,630,000 դրամի չափով:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Նախատեսված չեն:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրիի համայնքապետարան
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված «Բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի» 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

29.04.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ